Հ. Ս. Անասյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԱՆԱՄԱՆ ՄԱՍԻՆ

9(495)
57

30341

Ա. Ասատրյան, Հ. Վ.
Հայ ազգությունը
և պետական նրա:
Տո. 604.


ՀԱՅԱՍ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

А. С. АНАСЯН

АРМЯНСКИЕ ИСТОЧНИКИ О ПАДЕНИИ ВИЗАНТИИ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1957

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

9(495.02)
Ա-57

Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԱՆԿՄԱՆ ՄԱՍԻՆ

30364
Ա 11 3կպօշ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1957

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների
ակադեմիայի Լեզվի, գրականության և արվեստի
ինստիտուտի որոշմամբ

Գրքում մանրամասնորեն քննվում են Բյուզանդիայի անկման պատմության հետ առնչվող մի շարք հարցեր, մասնավորապես քննության է ենթարկվում բյուզանդական վերջին կայսր Կոստանդին Դրագասի վախճանի հետ կապված առհղծվածը, որը և իր հաջող լուծումն է ստանում հայկական աղբյուրների լույսի տակ։ Հրատարակվում են, հայերեն բնագրով և կից ռուսերեն թարգմանությամբ, Բյուզանդիայի անկմանը նվիրված՝ ժամանակակից հայ հեղինակներ Աբրահամ Անկյուրացու և Առաքել Բաղիշեցու չափածո երկերը, ինչպես և ծէ դարի հեղինակ Երեմիա Չելեբի Քոմուրջյանի չափածո «Օսմանյան պատմության» այն գլուխը, որը նվիրված է նույն դեպքերին։ Բնագրերին կցված են գոյություն ունեցող օրինակների տարբերվերցվածները և կարևոր ծանոթագրություններ։

В книге подробно исследуется ряд вопросов, имеющих непосредственное отношение к истории падения Византии, в частности рассматривается историческая легенда, связанная с гибелью последнего византийского императора Константина Драгаша, что и находит свое положительное решение в свете армянских первоисточников. Публикуются армянские оригиналы и перевод на русский язык стихотворных трудов Абраама Анкирского и Аракела Багешского о падении Византии, а также отрывок из стихотворной «Османской истории» Еремии Челеби Кеомурджяна, посвященный этим же событиям. К текстам приложены разночтения и необходимые примечания.

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԱՆԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Կոստանդինուպոլսի անկումը խոշոր տպավորություն առաջ բերեց Բյուզանդական կայսրության սահմանակից երկրներում և հատկապես Հայաստանում: Այդ դեպքի նկարագրությանն են նվիրված ԺՆ դարի երկու նշանավոր հիշատակարաններ՝ Աբրահամ Անկյուրացու և Առաքել Բաղիշեցու ոտանավոր ողբերը:

Այդ հեղինակները երկուսն էլ հայկական վերնախավերին են պատկանում: Նրանց դիրքավորումը նույն և միասնական է Բյուզանդիայի և նրա քշնամի թուրքերի միջև, բայց նրանք քաղաքական տարբեր ուղղությունների ներկայացուցիչներ են:

Աբրահամ Անկյուրացին բացահայտ կերպով հունական ուղղափառների տեսակետն է պաշտպանում, մեղադրյալի աթոռի վրա նստեցնելով եվրոպացիներին, որոնք իրենցից խնդրված օգնությունն ուշում էին պայմանավորել հույների համար դավանական դիջումներով: Նա գրում է.

«Իսկ թագաւորն Ըստամպուլայ
Անձօր մընաց ամենևին.
Ձակն ի ֆըրանկ ազգըն ձգեաց,
Թէ յօգնութիւն հասանէին:

Իսկ ազգն անգութ լատինական
Բանս անյարմար ի մէջ բերին՝
Աւանդութեամբ ի մեզ դարձիր,
Ձքաղաքդ սրա ի մեզ յանձին»[1]:

[1] Աբրահամ Անկյուրացի, «Ողբ ի վերայ առման Կոստանդինուպոլսոյ», տող 33—40:

Նրան հակառակ՝ Առաքել Բաղիշեցին հույն սրիմտականների դիրքերի վրա է կանգնած, հույսեր դնելով Արևմուտքի օգնության վրա:

Բյուզանդիայի ներքին հակասի վերաբերմամբ հայ երկու հեղինակների տարբեր դիրքավորումները ցույց են տալիս, որ նրանք հայկական կյանքի տարբեր հոսանքների ներկայացուցիչներ են:

Աբրահամ Անկյուրացին ծնվել է հավանաբար Փոքր Ասիայի Անկյուրիա քաղաքում: Բայց Կ. Պոլսի Ողբից, նրա անունով կա և մի «Հայոց պատմության ժամանակագրություն». նրան են վերագրվում նաև մի քանի ուրիշ տաղեր[1]:

Առաքել Բաղիշեցին հայտնի բանաստեղծ և մատենագիր է. ծնվել է Հայաստանի Բաղեշ քաղաքի Պաո գյուղում (այժմյան Բիթլիսի վիլայեթ, Թուրքիայում): Նրան է մատենագիրը Գրիգոր Տևերնցի աշակերտը: Բողել է մեծ թվով պատմական, ներբողական, վիպասանական, բարոյախոսական ու հոգևոր բնույթի չափածո աշխատություններ, ինչպիսիներն են՝ Հովասափի և Բարաղամի վեպը, Գրիգոր Լուսավորչի պատմություն, Ներսես Պարթևի ներբողը, Գրիգոր Տևերնցին նվիրված կտորները, Կ. Պոլսի Ողբը, Բլրույի և վարդի գովասանքը, և այլն: Կ. Պոլսի Ողբում Հայաստանի աղետաբերման դաղափարն է վերարծարծվում: Հայ ժողովրդի աղետաբերման իրճը արտահայտված ենք գտնում նաև նրա մաղթողական հոգևոր տաղերից մեկում, հետևյալ խոսքերով՝

«Դադարեցո՛ վիշտս ի Հայոց,
Զոր միշտ կրեմք յաղագս պղծոյդ:
Տէր ողորմեա»[2]:

Առաքել Բաղիշեցուց մեզ հասել են նաև մի շարք պատմական և հատական արձակ երկեր[3]:

---

[1] Տեսնել մեր «Հայկական մատենագիտություն» աշխատությունը, հտ. Ա. (մամուլի տակ):

[2] ՀՍՍՌ Գիտական Մատենադարանի ձեռ. № 597, էջ 236ա:

[3] Առաքել Բաղիշեցու բերդն գրչից մեզ հասած չափածո և արձակ երկերը, մեր հաշվով, ոչ պակաս, քան 80 կտոր են, որոնք մանրամասնորեն նկարագրված են մեր վերոհիշյալ աշխատության մեջ:

Կ. Պոլսի անկման լուրը առանձնապես ծանր տպավորություն էր առաջ բերել Հայաստանում այն պատճառով, որ իր պետականությունն ու անկախությունը կորցրած հայ ժողովրդի համար Բյուզանդիան մինչև այդ ստացել էր ապագա ազատարար լինելու համբավը։ Ինչ-որ Ագաթրոն փիլիսոփայի վերագրված մարգարեության մի հատվածը ցույց է տալիս այն քաղաքական ակնկալությունը, որ հայերն ունեին Բյուզանդիայից՝ իրենց ազատագրման համար, դեռևս ԺԴ դարում։

Ըստ այդ երկածքի՝ Կ. Պոլսի թագավոր Վիլանդը (Բյուզանդ) պաշտպան էր հանդես գալու հայ ժողովրդին և նրա վաղարշակ թագավորին՝ հագարացի նվաճողների դեմ։ Վիլանդ թագավորը, որն այստեղ վիպականորեն բյուզանդական հզոր ժողովրդի և պետականության անձնավորումն է, պաշտպանելու էր Վաղարշակ թագավորին, որը հայ ժողովրդի և հայկական պետականության անձնավորումն է։ Ահա թե ի՛նչ էր ասում մարգարեությունը.

«Իսկ զայս ամենայն լսելով արքային Վիլանդայ՝ զարձուցանի ազգին Հագարու և զաւերումն աշխարհիս Հայոց և հարկանելոյ զպատակեալ ծառայն աստուծոյ [զՎաղարշակ], յայնժամ ժողովէ զօրս իւր զիշօր և զյաղթանդամ, զարի և զպատերազմողսն, և հրամանաւ անեղին աստուծոյ արձակին ի վերայ ազգին Հագարու իբրև զառիւծ խոյացեալ... այնպէս բնաջինջ արասցէ զազգն Հագարու և զորդին Իսմայելի, զի վրէժխնդիր է արքայս Վիլանդ՝ արքային Վաղարշակայ»[1]։

Այս տեսակետից էլ հասկանալի է, թե ինչո՛ւ համար

---

[1] ՀՍՍՌ Պետական Մատենադարանի ձեռ. № 3839, էջ 209ա։ Մեզ համար բացահայտ է, որ Ագաթրոնի մատենաբերության այն մասը, որը պարունակում է մեր այս հատվածը, նրա սկզբնական խմբագրության մեջ չի եղել, որովհետև այդ մասը ուղղակի հակասության մեջ է գտնվում նրա նախորդ մասերի հետ, որտեղ վերաբերմունքը Քշնամական է Բյուզանդիայի հանդեպ։ Բնագրագիտական խնդիրների մասին մենք կխոսենք ուրիշ տեղ. այստեղ միայն նշենք, որ մեր օգտագործած հատվածն ու մասը գտնվում են Ագաթրոնի մատենաբերության նուշինակ ամենահին օրինակում, այն է՝ ՀՍՍՌ Պետական Մատենադարանի № 1382 ձեռագիրը, որը 1219 թվին է ընդօրինակվել։ Ագաթրոնի մասին տես նաև ավելի ստորև։

Բյուզանդիոնի հայերը, հույների և իտալացիների հետ միասին, այդպես անձնվիրաբար գործուն մասնակցություն են ունենում քաղաքի հերոսական պաշտպանության գործում 1453 թվականին, երբ Մահոմետ Բ-ի զորքերը կռիվներ էին մղում նրա դեմ[1]:

Այս պատճառով նաև Բյուզանդիայի անկման լուրն ուղղակի շանթահարել էր հայ հոգևորական և մտավորական վերնախավերին, քանի որ նրա հետ միասին հայերը կորցնում էին իրենց ազատագրման հույսերի հզոր կռվանը: Աբրահամ Անկյուրացին և Առաքել Բաղիշեցին երկարաշունչ քերթվածներով ողբացին Կ. Պոլսի անկումը, արտահայտելով հայ ժողովրդի ոչ թե միայն վերնախավերի, այլ առհասարակ բոլոր խավերի խոր վրդովմունքը, ցավն ու վիշտը քաղաքակրթության այդ հոյակապ ոստանի նվաճման ու ավերման առթիվ, և նրանց բացասական վերաբերմունքը՝ նվաճող բարբարոսների հանդեպ: Դավիթ Խաբրևրդցին անիծում էր Լուկաս Նոտարասին, որպես դավաճանի, որն իր հայրենիքի դռները բաց էր արել թշնամու առաջ. «զի որպէս յաւուրս սրբոց Վարդանանց չար իշխանն Սիւնեաց ուրացեալն Վասակ եղև պատճառ և կորուստ աւերման աշխարհիս Հայոց, և ի կողմն ուրացելոյն դարձաւ, նոյնպէս և պիղծն Կիւլիկէ... Հռոմն, խոռն ի հաւատոյ և անիծեալն յաստուծոյ»[2]:

Բայց միայն ողբը չէր: Մեր ողբերգուները չէին ուզում հավատալ, որ բյուզանդական մայրաքաղաքն ընդմիշտ գերի կմնար բարբարոսների ձեռքում: Այդ հավատը կա և՛ Առաքել Բաղիշեցու մոտ, և՛ Աբրահամ Անկյուրացու: Բյուզանդիայի մոտալուտ ազատագրման մասին եղած հավատը կարճ ժամա-

---

[1] Տես *К. Н. Григорьян*, „Из истории русско-армянских культурных связей X—XVII веков" (Академия наук СССР. Труды Отдела древнерусской литературы Института русской литературы. IX. Москва-Ленинград, 1953), стр. 332—333.

Այստեղ ցույց են տրված այդ իրողության վերաբերող աղբյուրները:

[2] Գ. Սրվանձտյանց, «Թուրս ազգաբ», մաս Բ, Կ. Պոլիս, 1885, էջ 380:

նակում ամրացավ այն ղրույցի ազդեցության տակ, ըստ որի Կոստանդին կայսրը փոխել էր Արևմուտք։

Միաժամանակ զարթնում են հայկական ավանդությունները, որոնց բովանդակությունը միաձուլվում է բյուզանդական ղրույցի քաղաքական բովանդակության հետ։ Կիլիկյան իշխանության շրջանում, երբ հայերն անմիջական ու երկար շփման մեջ էին դրնվել խաչակիր բանակների ու ժողովուրդների հետ (ԺԱ—ԺԳ դդ.), երևան էին եկել մի քանի գրական անվավերական ստեղծագործություններ, ինչպիսիներ էին Ներսես Պարթևին և Ագաթրոն փիլիսոփային վերագրված մարգարեությունները, որոնց մասին ակնարկում է Առաքել Բաղիշեցին («սուրբ հայրապետքն աստուածային»)։ Այդ մարգարեությունների համաձայն հայ ժողովուրդը հաղարացինների լծի տակ ընկնելուց հետո պիտի ազատագրվեր ֆրանկների (հռոմեացիների) օգնությամբ[1]։ Եվ Առաքել Բաղիշեցու մոտ

---

1 Այս գրվածքներում Հայաստանի ազատագրման խնդրից հետո խոսվում է Նեռի հայտնման և աշխարհի կատարածի մասին։

Ներսիսյան մարգարեությունը մուծված է Թ դարի մատենագիր Մեսրոբ Երեցի գրած՝ Ներսես Պարթևի կենսագրության մեջ, որը մեզ հասել է երկու խմբագրությամբ. առաջինը, առանց հեղինակի անվան, հրատարակվել է «Սոփերք հայկականք» մատենաշարի Զ հատորում (Վենետիկ, 1853), իսկ երկրորդը կազմում է «Պատմութիւն մեծագործ դաց Հայոց և վրաց» խորագրով գրքի երկրորդ մասը (Մադրաս, 1775)։ Երկրորդը հրատարակվել է նաև առանձին և առանց հեղինակի անվան՝ «Պատմութիւն երջանիկ վարուց և մահուան երանելի առն աստուծոյ սրբոյն մեծին Ներսէսի և որ ինչ մարգարէական հոգւով ասաց նախ քան զլինելնէն», և այլն (կ. Պոլիս, 1737)։ Բացի տպագրություններից, այս մարգարեության բազմաթիվ ձեռագիր օրինակներ կան ՀՍՍՌ Պետական Մատենադարանում։

Ագաթրոնի մարգարեությունն անտիպ է։ Այդ գրվածքը ծանոթ չէ օտարազգի գրականություններում, բայց, անտարակույս, օտար ազդյուրներից ծագած հայկական խմբագրություն է, որը կապ ունի Մեթոդիոս Պատարացուն (հայկական խմբագրությամբ), Ներսես Պարթևին և Ագաթանգել «սուրբ և անյաղթ փիլիսոփայ»-ին վերագրված դուշակողական գրվածքների հետ, ինչպես նաև Կոստանդիանոսի «Ցնսիլը»-ի հետ, և այլն։ ՀՍՍՌ Պետական Մատենադարանում գտնվում են այս բնագրի բազմաթիվ ձեռագիր օրինակներ, որոնք ներկայացնում են երկու խմբեր, առանց խմբագրական էական տարբերություննե-

շարադրվում է նաև այս մարգարեությունների բովանդակությունը, այն է՝ ֆրանկների արշավանքը, Երուսաղեմի առումը, արշավանքի ծավալումը դեպի Արևելք՝ մինչև Դավրեժ և Հայոց Բագավորության վերականգնումը:

Սակայն Առաքել Բաղիշեցու մոտ կա նաև մի նոր մոմենտ, որը բացակայում է հիշյալ մարգարեությունների մեջ: Դա այն է, որ ֆրանկների արշավանքը ուղղակի Երուսաղեմի վրա չի գնալու, այլ նախ պալու է Կ. Պոլիս և նրանից հետո նոր անցնելու է Երուսաղեմ: Նա գրում է.

«Նախ զՔաղքմպոլ քաղաքն առնուն
Ամենազօր կամօք փըրկչին,
Ապա յառաջ համարձակին
Եւ ի բոլոր աշխարհ սրփռին»[1]:

Այս նոր մոմենտը բացահայտ կերպով այն ազդեցությունն է, որ վերջին ժամանակներում տեղի ունեցած քյուպանպական իրադարձությունների արձագանքը գործել էր Առաքել Բաղիշեցու վրա: Բանը նրանումն է, որ Ֆլորենցիայի բանակցություններին ընթացքում Եվգենիոս Դ պապի կողմից հույներին արված օգնության խոստումների մեջ կար հետևյալ կետը, թե «Երուսաղեմի համար սահմանված խաչակրությունը պիտի անցներ Կ. Պոլսի վրայով»[2]:

Սակայն արևմտյան Եվրոպան, որը պատակված էր ինքն իր մեջ, ամենևին էլ մտադիր չէր իրապես խաչակրական արշավանք կազմակերպելու Թուրքերի դեմ: Այս հարցում ուխտադրուժ բաղաքականություն էր վարում հատկապես պապությունը: Հռոմի պապերը, որոնք միավորելու և խաչակրության մղիչ ուժը հանդիսանալու հավակնություն ունեին, իրենց

քեր: Հնագույն օրինակին ընդօրինակվել է 1219 թվին և կրում է հետևյալ վերնագիրը. «Ազգաբոնի անյագի փիլիսոփայի Ամենազոյ տաճկաց վասն բարի ժամանակին և սուրբ Բագաւորացն յայտնելոյ և վասն ոգւոյն նեռոդոց կործանմանն և զարձեալ յայտնելոյ», և այլն (ձեռ. № 1382, էջ 309ա—318բ):

[1] Առաքել Բաղիշեցի. «Ոգոր մայրաքաղաքին Սաքմպոլոյ», տող 181—184:

[2] *Ch.—J. Héfélé*, „Histoire des conciles d'après les documents originaux", t. XI, Paris, Librairie Adrien Le Clerc, 1876, p. 438.

իսկական նվաճողական նպատակները քողարկելով բարեպաշտական հայտարարություններով («սուրբ վայրերը» ազատելու մասին և այլն)՝ դավաճանորեն իրենք էին արգելակում թուրքերի դեմ որևէ արշավանք, երբ այդ հակառակում էր իրենց շահերին։

Այս տեսակետից որքա՜ն պերճախոս է, օրինակ, Ալեքսանդր Զ պապի արարքը, Կ. Պոլսի անկումից քիչ հետո, 90-ական թվականներին, երբ Ֆրանսիայի Կարլոս Ը թագավորը պատրաստվում էր անցնել Իտալիա, այն հաշվով, որ, ինչպես ասում էին, «Նեապոլսի թագավորության նվաճումը կլիներ Կ. Պոլսի նվաճման նախերգանքը»[1]։ Այս առթիվ Ալեքսանդր Զ պապը, որը չէր ուզում, որ Կարլոս Ը-ը ոտք դներ Իտալիա, դիմել էր ստոր մատնության, իր գաղտնի պատվիրակի միջոցով սուլթան Բայազիդ Բ-ին հաղորդելով, որ «Ֆրանսիայի թագավորը մեծագույն ուժով և ահարկությամբ և, գլխավորապես, Միլանի պետության, բրետոնների, պրոտուգալացիների, նորմանդացիների և ուրիշ ժողովուրդների օգնությամբ գալիս է այստեղ՝ Հռոմ, վերցնելու համար Նորին Բարձրության եղբայր Ջեմ սուլթանին*, նվաճելու համար Նեապոլսի թագավորությունը և վտարելու [այնտեղից] Ալֆոնս թագավորին..., որը [Ֆրանսիայի թագավորը] ոչ միայն Ջեմ սուլթանին վերցնելու և հիշյալ թագավորությունը նվաճելու համար [է գալիս], այլ նաև, ինչպես պետք է հայտնի լի-

---

1 Կարլոս Ը-ի այս ծրագրի և Իտալիա անցնելու մասին տես՝ T. G. Djuvara, „Cent projets de partage de la Turquie (1281—1913)", Paris, Librairie Félix Alcan, 1914, p. 46—50. Ավելի քննարկումներն՝ Donato da Lezze, „Historia turchesca (1300—1514)", Bucuresti, Institut de Arte Grafice „Carol Göbl", 1909, p. 196—200 (բուա Marino Sanuto-ի՝ „Spedizione di Carlo VIII in Italia", ed. Rinaldo Fulin, Venezia, 1873).

* Ջեմ սուլթան Բայազիդ Բ-ի եղբայրն էր, որը Բրուսայում իրեն թագավոր էր հայտարարել նրա դեմ, որպես պետության օրինական ժառանգորդ, բայց ստիպվել էր տեղի տալ ու ապաստան փնտրել Եվրոպայում, որտեղ և դարձել էր դերի ու Բայազիդի հավիտենական պատանդ։ Այս ժամանակ նա պահվում էր պապի տրամադրության տակ։

նի Ջեր Տերությանը, անցնելու համար Հունաստան և նվաճելու Նորին Մեծության երկիրը, և ասվում է, որ նույն Ջեմ սուլթանին բանակով Բուրբիա են ուղարկելու» և այլն[1]: Սրանից հետո պատմությունն արձանագրել է նաև, որ Ալեքսանդր Ջ-ը սիրով է կատարել սուլթանից ստացած «փրկարար» թելադրանքը, թունավոր շաքարով սահման դնելով Ջեմի կյանքին[2]:

Եվրոպան տգիտությունից խոստումներով խաբում էր միշտ Արևելքի քրիստոնյա ժողովուրդներին, որոնց թվում և հույներին, երբեմն, նույնիսկ, իրական արշավանքներ կազմակերպելով Օսմանյան կայսրության դեմ՝ զանազան այլ հաշիվներով. խաբում էր, որպեսզի իր արշավանքների ժամանակ կարողանար այդ ժողովուրդների միջոցով ներքին խլրտումներ առաջացնել սուլթանների պետության ներսում: Եվ զարմանալի չէ, երբ Կ. Պոլսի անկման հաջորդող սկզբնական շրջանում Եվրոպայի այս խաբեական կեղտոտ քաղաքականությունը, դավանակիցներին օգնելու կեղծավոր խոսքերով բողարկելով իր իսկական նվաճողական դիտավորությունները, հաջողության հնարավորություններ էր ձեռք բերում:

Օգնության մասին եղած ամբողջովին կեղծ, բայց ևրևութապես բարյացակամությամբ ու անկեղծ համակրանքով տոգորված խոստումները նպաստավոր հող էին գտնում հանկարծական սարսափության մեջ ընկած բյուզանդական ժողովրդի մեջ:

Ինչպես հայտնի է՝ Բյուզանդիայի անկման պատճառների մեջ կարևոր դեր են խաղացել ո՛չ միայն արտաքին-քաղաքական հանգամանքները, այլև, գլխավորապես, կայսրության ներքին կյանքում սիրող տնտեսական և սոցիալական պայմանները, դասակարգային հակադրության այն ազդակները, որոնք շերտավորել էին բյուզանդական հասարակությանը: Տնտեսական անկման և դրա հետ միասին դասակարգային

[1] *Donato da Lezze*, „Historia turchesca", p. 195- 197.

[2] Ibidem, p. 200. J. von Hammer, „Geschichte des Osmanischen Reiches", Bd- I, Pesth. C. A. Hartleben's Verlag. 1834, S. 620. Lebeau, „Histoire du Bas-Empire", t. XXI, Paris, Firmin Didot frères, 1835, p. 443, J. de Saint-Martin-ի տված հավելվածում:

սուր պայքարի առկայությունն այդքան ընդհանրապես զրկում էր բյուզանդական պետականությանը ներքին հավասարակշռության հիմքերից, և երբ, վերջին շրջանում, թուրքական նվաճողականության կողմից սպառնացող վտանգը ավելի քան ծավալուն էր դարձել, գոյություն ունեցող այդ ըստ էության սոցիալական խմբավորումներն աշխատում էին, ըստ իրենց յուրահատուկ շահերի, յուրահատուկ ուղղություն տալ անկման եղրին հասած կայսրության կյանքի ընթացքին։ Կ. Պոլսի անկման նախօրյակում Բյուզանդիայում իրար հետ սուր պայքարի մեջ էին երեք քաղաքական հոսանքներ՝ ազգային-ուղղափառական պարտիան, արևմտական-լատինասիրական պարտիան և թուրքասիրական պարտիան[1]։ Այստեղ կարևոր է պարզել լատինասերների՝ Արևմուտքի հետ մերձեցման կողմնակիցների պարտիայի քաղաքական դիրքը։ Բյուզանդական կայսրության գոյության վերջին տարիների պատմությունը խոսում է այն մասին, որ լատինասիրական պարտիան խորապես վնասակար դեր էր խաղացել իր ժողովրդի վերաբերմամբ։ Լատինասերները դատարկ ու մոլար հույսեր էին դնում Արևմուտքի օգնության վրա, և վերջին հաշվով գործիք էին դառնում պապական արքունիքի շահամոլ ու դիշատիչ քաղաքականության համար։

Կ. Պոլսի անկումից անմիջապես հետո հենց արևմտական ուղղության կողմնակիցների միջավայրում ծնունդ էր առել մի գրույց, որի համաձայն բյուզանդական կայսր Կոստանդին ԺԱ-ը պետք է փախած լիներ դեպի Արևմուտք։

Ինչպես հայտնի է՝ Բյուզանդիայի վերջին կայսր Կոստանդին Դրագասը 1453 թ. մայիսին անձամբ մասնակցելով թուրքերի դեմ իր մայրաքաղաքի պաշտպանությանը, զենքը ձեռքին հերոսաբար ընկավ կռվի մեջ։ Ճիշտ է, որ պատմա-

---

[1] Բյուզանդական քաղաքական պարտիաների և նրանց սոցիալական կազմի մասին տես՝ З. В. Удальцова, „Борьба партий в Византии в XV веке и деятельность Виссариона Никейского", *Византийский Временник*, том II, Москва, 1949. Её же, „Борьба византийских партий на Флорентийском соборе и роль Виссариона Никейского в заключении унии", *Византийский Временник*, т. III, Москва, 1950.

պրներըը միմյանց համաձայն չեն այն մասին, թե իրապես ի՛նչ ձևով է տեղի ունեցել Կոստանդինի մահը, բայց համաձայն են այն բանում, թե նա ընկավ է կռվի մեջ. մի մասը նրան սպանված է համարում ենիչերիներից եկած թրի հարվածներով, ս. Ռոմանոսի դռան մոտ, իսկ մյուս մասը նրան համարում է ամբոխի մեջ ոտնակոխ եղած՝ նույն դռան անցքում, որտեղ խուճապահար 800 հոգի խեղդամահ են եղել:

Հակառակ, սակայն, այս պատմական իրողության՝ Կոստանդինի շուրջը ստեղծվել է մի առասպելական զրույց, որի համաձայն նա ոչ թե զոհվել է Կ. Պոլսի հերոսական ինքնապաշտպանության բեմի վրա, այլ փախել է Իտալիա: Այդ մասին է խոսում, օրինակ, հենց Աբրահամ Անկյուրացին, որը բաղաքի պաշարման և անկման ժամանակ այնտեղ է եղել.

«Ոմն ի յազգացըն Ֆըրանկին,
Որ դափուտան անուանէին,
Առեալ զթագաւորն և զմեծամեծս
Նաւով փախեաւ վերայ ծովին»[2]:

Այդպես գիտի նաև Դավիթ Խարբերդցին, որը հետու էր ապրում Կ. Պոլսից: Նա նույն 1453 թվին Խարբերդում հեռակայ մանրամասնություններով էր գրի առնում Կոստանդինի փախստյան զրույցը, նախընթաց դեպքերի հետ միասին.

«Արդ յայսմ ամի առաւ Մահմուտ քաղաքն ի Հռոմոց. գնացեալ ի վերայ Թագաւորն[1] որ կոչի Խոնդքար հինգ հարիւր հազար ձիաւորաւք և հետևակաւք [և] նաւուք, և երեք տարի բոլոր պատերազմեցաւ ընդ Ըստամբուլայ, քանզի Ֆռանկաց առաջնորդն որ ասի Պապ Թագաւոր, կոչեաց զպատրիարքն* Հռոմոց որ ի Մահմբուլ էր. և զթագաւորն Հռոմոց որ անդ, վասն հաւատոյ հաստատութեան ի Հռոմ քաղաքի, և կեցեալ նոցա անդ տարի մի բոլոր առ Թագաւորն Պապ՝ պատրիարքն

[1] G. Schlumberger, „Le siège, la prise et le sac de Constantinople par les Turcs en 1453", 3me éd., Paris, Librairie Plon, 1914, p. 310–311 et 313—316

[2] Աբրահամ Անկյուրացի, տող 105—108:

* Տպված է՝ «պատարքիարքն»:

և թագաւորն։ Իսկ յորժամ դարձեալ եկին նոքա ի Սատմբալ, իշխանացն Հռոմոյ կարծեալ էր թէ պատրիարքն և թագաւորն ի ֆռանկութիւն դարձան։ Իսկ նոքա բազում անգամ երդուեալ և իշխանքն Հռոմոյ ոչ հաւատային. և ոխս պահեալ իշխանացն Հռոմոյ ընդ թագաւորին և պատրիարքին իւրեանց, և այլ ոչ միաբանեցան ընդ նոսա։ Որոյ ի ձեռն պատգամաբերաց և միջնորդաց իշխան մի Հռոմ, Կիւղիկէ անուն, յղեաց առ թագաւորն, խոնդքարն ծածկաբար, թէ՝ Ես առայ զքաղաքս Սատմբալ, մի՛ գնար այսր։ Եւ յաւուր միում մինչդեռ պատերազմ խմբեալ կայր և մեռան ի Տաճկաց հարիւր հազարէն հինգ հազար անձն ի կռիւ, իսկ ի Հռոմոյ մեռան տասն հազար անձինք, և իշխանն այն Կիւղիկէ բացեալ զմի դուռն քաղաքին... և մտեալ ազգն Տաճկաց հանդերձ թագաւորաւն ի ներքս ի քաղաքն։ Իսկ պատրիարքն և թագավորն... մտեալ ի նաւ մի մեծ և բազում ժողովրդեամբ իբրև քսան հազար արամբ փախստական գնացին ի Հռոմ և տարեալ զամենայն արբութիւնն ի հետ իւրեանց», և այլն[1]։

Այս առասպելական զրույցի ազդեցությունը զգալի է նաև Առաքել Բաղիշեցու Ողբում։ Տարակույս չկա, որ այդ զրույցը հույներից է գալիս, որովհետև պարզ է, որ Աբրահամ Անկյուրացին, որը քաղաքի անկումից հետո դեռ առնվազն հինգ ամիս ևս այնտեղ էր դանվել,— քանի որ նույն թվի հոկտեմբերին Անկյուրիայից այնտեղ բերված հայ գաղթականների մասին է խոսում[2],— և այնտեղ էլ գրել է իր քերթվածը, Բյուզանդիոնի բնակչության մեջ շրջան անող զրույցի արձագանքն է տվել։

Մենք դտնում ենք, որ այս լեգենդան, որքան էլ լեգենդա լինի, այնուամենայնիվ մի կողմից իր մեջ խտացրել է որոշ պատմական տարրեր Կ. Պոլսի անկումից առաջ դոյություն ունեցող քաղաքական իրադրությունից և մյուս կողմից, մանավանդ, արտահայտում է նրա անկման անմիջականորեն հաջորդող շրջանում միաժամանակ ծավալվող քաղաքական-դաղափարական մթնոլորտը։

---

[1] Գ.՛ Սուքիասյանց, «Թուրս ազգաբ», մասն Բ, էջ 379—380։

[2] Աբրահամ Անկյուրացի, տող 265—272։

Այս տեսակետից զրույցի ծագումը պետք է որոնել Բյուզանդիայի հասարակական կյանքի վերջին ևևէջների մեջ, այլ խոսքով՝ բյուզանդացիների մոտ գոյություն ունեցող ու գործող քաղաքական հոսանքների կամ պարտիաների պայքարի մեջ։

Թողնելով ավելի հին շրջանը՝ նշենք, որ դեռևս 1438/1439 թվականներին Նվգենիոս Դ պապի հրավերով գումարված Ֆերրարա-Ֆլորենցիայի ժողովում, որին մասնակցել էր բյուզանդական կայսր Հովհաննես Ը-ը Հովսեփ Բ պատրիարքի և հունական եկեղեցու բազմաթիվ ներկայացուցիչների հետ, շատ երկար բանակցություններից հետո հունական կողմը ստորագրել էր եկեղեցիների միության ակտը, նրա փոխարեն պապից ստանալով թուրքերի դեմ օգնության խոստումներ[1]։

Դրանից հետո, չնայած այն բանին, որ միության այդ ակտը Կ. Պոլսում զայթակղության և աննկարագրելի հուզմունքի առիթ տալով չէր վավերացվել հունական կղերի կողմից, որով և մնացել էր լոկ թղթի վրա, վերջին կայսր Կոստանդին Դրագասը, առավել քան երբևէ վտանգված տեսնելով իր կայսրության գոյությունը սուլթան Մահոմետ Բ-ի կողմից, հարկադրված էր եղել Նիկոլա Ե պապից նորից խընդրել օգնություն, խոստանալով իրականացնել միաբանության գործը. Հռոմից ընդվորական որոշ օգնությամբ, բայց և միության գործը վերջացնելու պահանջով, որպես լիազոր ուղարկվել էր Ֆլորենցյան ժողովի գործիչներից մեկը՝ իր դավաճանական գործունեությամբ հայտնի կարդինալ Իսիդոր Ռուսը, որը Կ. Պոլիս էր հասել 1452 թ. նոյեմբերին. նորից էր բարձրացել հուզմունքի և զայրույթի ալիքը բյուզանդական ժողովրդի ամենալայն խավերի մեջ և, ամենից առաջ, այսպես

[1] *Ф. И. Успенский*, „История Византийской империи", т. III, Москва-Ленинград, Изд. Академии наук СССР, 1948, стр. 770—773. *Բանակցությունների մանրամասն պատմությունը տես՝ Ch.—J. Héfélé*, „Histoire des conciles d'après les documents originaux", t XI, p. 377—482. *Նաև E. Gibbon*, „Histoire de la décadence et de la chute de l'Empire Romain", t. II, Paris, Société du Panthéon littéraire, 1843. p. 838—845 et 856—857.

Ա 3400

կոչված ուղղափառական պարտիայի, որին գլխավորում էր Կոնստանտին Սքոլարիոսը, անկարելի դարձնելով որևէ առաջադրում միության գործում[1]։

Վերջիվերջո՝ լատինասերների պարտիային չհաջողվեց իրագործել իր պլանները և, հակառակորդների հետ նրա մարտական ընթացքում, մայրաքաղաքն ընկավ թուրքերի ձեռքը։

Սակայն օգտվելով այն հանգամանքից, որ անստուգություն էր տիրում ժողովրդի մեջ կայսրի մահվան պարագաների վերաբերյալ, օգտվելով նաև այն իրողությունից, որ կայսրը լատինասիրական հոսանքի գլխավորողն էր եղել մինչև վերջին պահը, արևմտական պարտիան սկսել էր անմիջապես տարածանել այն մասին, թե Կոստանդինը չի մահացել, այլ իր պալատականների հետ անցել է Հռոմ, որտեղից կվերադառնա շուտով, լատինների օգնությամբ, և թե Հռոմ էին փախցվել նաև մայրաքաղաքի անօրինական և այլ սրբությունները, որոնց նշանակությունը հասկանալի է տվյալ դեպքում։

Դավիթ Խարբերդցին, որի համաձայն կայսրն ու պատրիարքը միասին են փախել, ասում է, որ նրանք «յառաջագոյն ամսով մի պատրաստեցան փախչիլ, զի գիտէին... զի յայտնեաց նոցա աստուած...» և այլն[2]։

Միամիտ մասսաների մոտ այս մտացածին փախուստը ընկալվում էր որպես աստվածային նախախնամության մի կարգադրություն, որի նպատակն էր, իհարկե, նրան փրկել բարբարոս նվաճողներից։ Եվ ի՞նչ միջոցով։ Պարզ է՝ Հռոմի միջոցով։

Մենք ասացինք, որ փախուստի այս լեգենդայի մեջ խառնված են որոշ պատմական տարրեր Կ. Պոլսի անկումից առաջ

---

[1] *Ф. И. Успенский*, „История Византийской империи", т. III, стр. 779—780. *G. Schlumberger*, „Le siège, la prise et le sac de Constantinople" etc., p. 7—10. *E. Gibbon*, „Histoire de la décadence et de la chute de l Empire Romain", t. II, p. 878—879.

[2] Գ. Սրվանձտյանց, «Թուրս ապրած», մասն Բ, էջ 380։ Դժբախտաբար բնագիրը քերուկներ ունի այս մասում, որտեղ, ըստ երևույթին, դեռ ուրիշ հետաքրքրական մանրամասնություններ պետք է լինեին։ Այս քերուկները թուրքական գրաքննության երկյուղի տակ հրատարակչի կողմից կատարված էրճատումներ են։

347—2

ՀՍՍՌ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ

գոյություն ունեցող իրադրությունից։ Արդ, որո՞նք են այդ տարրերը լեգենդայի մեջ։

Ջրույցում ասվում է, որ վերջին կայսրը և պատրիարքը, ինչպես տեսանք Դավիթ Խարբերդցու աված մանրամասնություններից, «Պապ թագավորի» (Հռոմի պապի) հրավերով գնացել են Հռոմ՝ «վասն հաւատոյ հաստատութեան». այնտեղ մի տարի մնալուց հետո վերադարձել են Կ. Պոլիս, որտեղ, սակայն, հունաց իշխանները, կարծելով, որ նրանք ֆրանկություն են ընդունել, հակառակվել են նրանց. «և սխս պահեալ իշխանացն Հռոմոյ ընդ թագաւորին և պատրիարքին իւրեանց, և այլ՝ոչ միաբանեցան ընդ նոսա». և երբ թուրքերը ներխուժել են քաղաքը, նրանք փախել են դարձյալ Հռոմ[1]։

Այս անցքերի մեջ իրոք որ պատմական որոշ հիմք կա, բայց դա չի վերաբերում Կոստանդին Դրագաշին։ Այդ պատմականը վերաբերում է Ֆեռրարա-Ֆլորենցիայի ժողովին (1438/1439 թթ.), որին անձամբ գնացել են Կոստանդինի նախորդը՝ Հովհաննես Ը կայսրը և Հովսեփ Բ պատրիարքը «վասն հաւատոյ հաստատութեան», և այնտեղից վերադառնալով, իրոք, հանդիպել են Կ. Պոլսում քենի, ոսխ և հակառակության. բայց Կոստանդինը Իտալիայում չի եղել երբեք։ Գալով ջրույցում պատրիարքի հիշատակությանը՝ այնտեղ ևս շփոթություն կա։ Վերոհիշյալ Հովսեփ Բ-ը մահացել էր Ֆլորենցիայում, ուրեմն՝ չէր վերադարձել. բայց վեսլը նրան վերադարձնելով իր աթոռին՝ նրան շփոթում է և կապում Ֆլորենտյան ժողովի գործիչներից Գրիգորիոս Մելիսսենոսի հետ, որը հետագայում Հռոմի ճնշումով պատրիարք էր դարձել, իսկ Կոստանդինի օրով Հռոմ էր փախել, խույս տալով միության հակառակորդների զայրույթից։

Պատմական դեպքերի այս արձագանքները, որոնք ընդհանուր գծերի մեջ հենց արևմտական պատերազմի անցյալ դրծունեության արձագանքներն են, միանալով վերջին կայսեր անվան հետ, այժմ պետք է ամբոխավարական որոշ դեր կա-

---

[1] Գ. Սրվանձտյանց, «Թուրս ապրար», մասն Բ, էջ 380։

տարեին մատաններին մեջ, նրանց քաղաքական ակնկալություններին ուղղություն տալու համար դեպի Արևմուտք։

Սակայն լատինասերների ամբոխավարական ագիտացիան կարող էր տեղեկանալ միայն ժամանակավոր ու վազանցուկ հաջողություն, քանի որ հունական ժողովրդի քաղաքական առաջնորդությունը իր որոնումների մեջ պետք է շուտով դաներ հին նոր ուղին, ռևալ ուղին, և նրան հասնելու համար իր գործունեությունը դներ նոր հունի մեջ։ Թե ինչպե՛ս էր սկսել քիչ հետո գծվել այդ ռևալ ուղին, դա երևում է Կոստանդին Դրագաշի փախստյան և նման քաղաքական առաջնորդների շիջումից հետո հրապարակ եկած հունական ազգային գրույցից, որը ազատագրական հայացքները տանում էր ո՛չ թե դեպի Արևմուտք, այլ դեպի Հյուսիս։ Համաձայն այդ գրույցի, որը վրացական մատենագրության մեջ է պահված, Կոստանդիանոս Մեծի տապանաքարի վրա դանվել էր մի խրթնաբան արձանագրություն, որը հայտնում էր ռուսների և մյուս սլավոնական ժողովուրդների ձեռքով Թուրքական իշխանության տապալման և Կ. Պոլսի ազատման մասին։ Այնտեղ, ի միջի այլոց, գրված էր.

«Մի շարք ազգեր միանալու են Սև ծովի և ցամաքի վրա. իսմայելացիները պարտվելու են և նրանց ազգի իշխանությունը, տկարանալով, ընկնելու է անարգության մեջ. Ռուսաստանի և շրջակայքի դինակցած ժողովուրդները նվաճելու են Իսմայելին, առնելու են յոթը բլուրներն ու նրանց բոլոր շրջակայքը»[1]։

Այս մարգարեական արձանագրության վերծանումը, ինչպես ավանդվում էր, իբր թե կատարվել էր Հովհաննես Ը Պալեոլոգ կայսրի օրով, հակալատինական՝ ուղղափառական պարտիայի առանդան գործիչներից Գեորգիոս Սքոլարիոսի կողմից, բայց ակնհայտ է, որ գրույցն ինքնին ավելի հետագա ժամանակի գործ է, քանի որ այնտեղ խոսվում է Թուրքերի կողմից Կ. Պոլսի և այլ երկրների նվաճման մասին։

---

[1] *Lebeau*, „Histoire du Bas-Empire“, t. XXI, p. 330, M.-F. Brosset-ի տված հավելվածում։

Վերադառնալով Կոստանդին Դրազասի փախստյան պրոյեկտին, պետք է նշել նրա լուսաբանման նշանակությունը Բյուզանդիայի անկման վերաբերող հայկական սկզբնաղբյուրների արժեքավորման տեսակետից։ Աբրահամ Անկյուրացին, որը ականատես է եղել Կ. Պոլսի պաշարման, անկման ու ավերման բոլոր դեպքերին, որպես այդպիսին շատ ճիշտ ու ճշգրիտ տեղեկություններ է տալիս այդ դեպքերի մասին. և սակայն՝ կարծես մթագնվում էր նրա արժեքը՝ կայսրի փախուստյան վերաբերող տեղեկությամբ, որը չէր համատեղվում պատմական իրողության հետ։ Այժմ պրոյեկտի լուսաբանմամբ պարզվում է, որ Աբրահամ Անկյուրացին հավատարիմ արձագանքող է այս կետում եղ։ Իսկ ինչ վերաբերում է Առաքել Բաղիշեցուն՝ այժմ մեզ հասկանալի է դառնում, թե ի՛նչպես էր, որ նրա մոտ այդպիսի թարմացած գույներով հանկարծ նորից էր լույս աշխարհ եկել իրենց քաղաքական ուժը վաղուց կորցրած խաչակրաց արշավանքների երազը, և ի՛նչ մթնոլորտի ազդեցության տակ է, որ մեր հեղինակն անձնատուր էր եղել այդ սին երազին՝ Բյուզանդիայի և Հայաստանի աղատագրման հույսերով։

* * *

Ի նկատի ունենալով Բյուզանդիայի անկման հարցերի լուսաբանման համար հայկական աղբյուրների ունեցած կարևորությունը, մենք հրատարակում ենք դեպքերին ժամանակակից Աբրահամ Անկյուրացու և Առաքել Բաղիշեցու ողբերի բնագրերը, ինչպես և ժէ դարի հայ հայտնի հեղինակներից Երեմիա Չելեբի Քյոմուրջյանի «Պատմութիւն համառօտ Դիտարուց Օսմանցոց թագաւորացն» չափածո աշխատությունից մի հատված, որը նույն դեպքերին է վերաբերում և հրատարակվում է առաջին անգամ՝ մեզ ծանոթ միակ ձեռագիր օրինակից։

Մենք այս նյութերից Աբրահամ Անկյուրացու և Առաքել Բաղիշեցու բնագրերի ռուսերեն թարգմանությունը (թարգմանիչ՝ Ս. Ս. Արևշատյան) հրատարակել ենք, մեր ուսումնասի-

թության հետ միասին, դեռևս 1953 թվին Византийский Временник պարբերականի VII հատորում, որը նվիրված է Կ. Պոլսի անկման 500-ամյակին: Այնտեղ մեր հրատարակությունը կրում է «Армянские хронисты о падении Константинополя» վերնագիրը[1] և զբաղում է հատորի 444—466 էջերը:

Ի դեպ՝ պետք է նշել, որ այս բնագրերը ժամանակին ունեցել են ֆրանսերեն թարգմանություններ ևս: Աբրահամ Անկյուրացու ողբը թարգմանվել է երեք անգամ. ա. Eug. Borè, „Elégie sur la prise de Constantinople; poëme inédit et extrait du manuscrit 80 arménien de la Bibliothèque Royale", *Nouveau Journal Asiatique*, t. XV, 1835, p. 271—298. բ. „Mélodie élégiaque sur la prise de Stamboul, traduite de l'arménien par M. Brosset", հետևյալ հրատարակության մեջ. Lebeau, „Histoire du Bas-Empire. Nouvelle édition, revue entièrement, corrigée et augmentée d'après les historiens orientaux, par M. de Saint-Martin", t. XXI, Paris, chez Firmin Didot frères, 1836, p. 307—314. գ. „Abraham prêtre arménien Mélodie élégiaque sur la prise de Stamboul, traduite et rendue à son vrai sens avec l'assistance d'un savant distingué de la nation et publiée par le Dr. phil. A. Dethier", հետևյալ ժողովածուի մեջ. A. Dethier, «Monumenta Hungariae historica», vol. XXII, seconde partie, Budapest, 1872, p. 225—248[2]. Իսկ Առաքել Բաղիշեցու ողբի թարգմանությունը՝ «Lamentation sur la prise de Constantinople» լույս է տեսել հետևյալ ժողովածուի մեջ. A. Tchobanian, «La Roseraie d'Arménie», t. III, Paris, Ernest Leroux, 1929, p. 109—118.

---

[1] Այդ անհամապատասխան վերնագիրը կազմվել է Византийский Временник-ի խմբագրության կողմից, առանց մեր համաձայնության: Աբրահամ Անկյուրացին և Առաքել Բաղիշեցին ժամանակագիրներ չեն, այլ տաղերգուներ:

[2] Այս գիքթախտ հրատարակությունը տպարանի սահմաններից դուրս չի ելել. համմ. K. Krumbacher, „Geschichte der byzantinischen Litteratur von Justinian bis zum Ende des Oströmischen Reiches", München, 1897, S. 3 2.

Աբրահամ Անկյուրացու և Առաքել Բաղիշեցու բնագրերը մենք պատրաստել ենք բաղմաթիվ օրինակների համեմատությամբ, առաջինի համար օգտագործելով 17, իսկ երկրորդի համար՝ 15 լրիվ և կամ թերի օրինակներ։

Բնագրերը կազմելիս չենք հենվել որևէ առանձին օրինակի վրա՝ որպես հիմնական օրինակի, խուսափելու համար աղավաղված պատկերով բնագրեր հրատարակելուց, որովհետև մեր ձեռքի տակ եղած օրինակները բոլորն էլ աղավաղումներ ունեին բնագրի այս կամ այն մասում։ Այդ պատճառով մենք կազմել ենք համահավաք բնագրեր, որոնք օրինակների համեմատությունից են բխում, թեև այս դեպքում ևս մեզ չի հաջողվել ազատվել բոլոր աղավաղումներից։

Նկատի ունենալով, որ մեր հրատարակած բնագրերը հայկական մատենագրության պատական շրջանի արտադրությունների շարքին են պատկանում և այստեղ հաշվի են առնվել առավելապես որպես պատմական աղբյուրներ, մենք համեմատված օրինակների ներկայացրած տարբերությունները նշել ենք անհրաժեշտության չափով միայն, անտեսելով երկրորդականները, որոնց բոլորի նշումը մեր ցանկերն անօգուտ կերպով կսուվարացներ մոտավորապես հինգ անգամ։ Հիմնականում լեզվական-քերականական բնույթ կրող այդ անհամահամանությունները թեև լեզվաբանի համար շահեկանություն զուրկ չէին լինի, բայց դրանցից որևէ բան չէին շահի մեր հրատարակած նյութերը բովանդակության տեսակետից։ Այսպես, օրինակ, Աբրահամ Անկյուրացու 112-րդ՝ «որ դարպասն էր թագաւորին» տողը ուներ «որ դարպասան էր», «որ դասպասա էր», «որ դարսան էր», «որ դարպաններն էր», «որ են դարպասս» տարբերակները, բայց մենք անհրաժեշտ չենք համարել նրանցով ծանրաբեռնել մեր հրատարակությունը։ Այսպես նաև՝ նույն հեղինակի 138-րդ՝ «ի մօր զրկացն խրէին» տողն ուներ՝ «ի մօր զրկանցն», «ի մօրս զրկանց», «ի մարց զրկացն», «ի զիրկս մարցն» տարբերակները, որոնք նմանապես չեն նշվել, և այլն։ Նույնպես ենք վարվել նաև ուղղագրական բնույթ կրող այլազանությունների հետ՝ ևս՝ –ձայ (նա), վերա–վերա՝ (վերայ), ձայև (նաև,) ոդոտց (որդ-

ւոց, որդոց), ևվազ–ևրվազ (նուազ, նրուազ), ևրուաղեալ (նուազեալ, նրուազնալ), լրուեալ (լուեալ, լրնեալ), սուլտան–սուլթան (սուլթան), Անկիւրի–Անկիւրա–Անկուրա (Անկիւրիա), և այլն։ Կարելի է այս կարգից համարել նաև ուղղագրական թիւրւթ ներկայացնող մի շարք այլ բառեր՝ յանյարմար–անարմար (անյարմար), յամենևին (ամենևին), յիշխաճ՝ որպես ուղղ. (իշխան), յաճօրինաց՝ որպես հոգն. սեռ. (անօրինաց), սւելեալ (յաւելեալ), աւիտեան (յաւիտեան), և այլն, սակայն պետք է ասել, որ այսպիսինները կարող են և համարվել բարբառային երևույթներ։

Բարբառային տարրեր կան և՛ Աբրահամ Անկյուրացու մոտ, և՛ Առաքել Բաղիշեցու, բայց առանձնապես ուժեղ են նրանք առաջինի մոտ։

Բնագրերի վերականգնման ժամանակ դժվար էր բոլոր դեպքերում երևան բերել լեզվական այն առանձնահատկութիւնները, որոնք հատուկ կլինեին ո՛չ միայն ընդհանրապես մեր հեղինակների ժամանակին, այլև մասնավորապես նրանցից յուրաքանչյուրի մոտ իշխող բարբառին։ Բնագրերի տարբեր ընդօրինակումների մեջ իզուր էր որոնել քերականական, շարահյուսական և լեզվական այլ կարգի միանմանութիւններ (օրինակ՝ եա–երեա–եաուր, եաուն–տուին, եհաս հաստատ, և այլն), որի հետևանքով և անհնարին էր դառնել այն ձևերը, որոնք իշխող են եղել տվյալ հեղինակի մոտ։ Այդ պատճառով՝ նման դեպքերում մենք նախընտրութիւնը տվել ենք դրաբարի ընդունված ձևերին. այսպես՝ Աբրահամ Անկյուրացու օրինակներից 8 հատը բնագրի 96-րդ տողում ունեին կուտաճ ձևը, սակայն, բացի այստեղից և այս բառից, բնագրի մյուս մասերում չենք հանդիպել այդ («ճ»-ով) ձևին, ուստի և այստեղ մենք նախընտրել ենք դրաբառախառն կուտամ ձևը, որ տալիս են մյուս օրինակները։ Բայց, այնուամենայնիվ, բարբառային որոշ երևույթներ աշխատել ենք պահել, իսկ մի շարք ուրիշ դեպքերում էլ պատահում են արդեն բարբառային ձևեր՝ առանց տարրալիերցվածների. այսպես՝ «կէսքրն չուանօք դիրար fարշին» (քարշէին)[1], «որպէս զառու արիւնքն հոսին»

[1] Աբրահամ Անկյուրացի, տող 100։

(հասէին)[1], «զբատերք ի մարցըն կուզային» (կուզային)[2], «եղբայրք յեղբօրէ կուբակին» (կուբակէին, «բաժանվում՝ անջատվում էին»)[3], «ի հայրենեաց բաղումք զրկին» (զրկին, «զրկվում էին»)[4], «երկնատրօք իր պահպանեալ» (էիր պահպանել)[5], «մատանեաց ըզնա ձեռս առելեաց» (ի ձեռս առելեաց)[6], «մատանեալ եղև ձեռն այլազգին» (ի ձեռն այլազգին)[7], «վերայ ծովուն» (ի վերայ ծովուն)[8], «վերայ Կոստանդինուպոլսին» (ի վերայ Կոստանդինուպոլսին)[9], «ամանք էին հետ բազուրին» (բազաւորին)[10], «առեալ զբազուրն» (զթագաւորն)[11], «վերայ քաղքին» (քաղաքին)[12], «սանդուխտանին» (սանդուխտանը)[13], «զանկակնին» (զանդակները)[14], «մարդարտանին» (մարգարիտներ)[15] և այլն:

Բնագրերի վերականգնման համար մեր ընտրած ընթերցումներն ընդհանրապես հենվել են համեմատված օրինակների աված ընթերցումների մեծամասնության վրա, սակայն հաճախ և շեղվել ենք այդ գծից, երբ փոքրամասնության հանդիսացող ընթերցումներն ակնհայտ կերպով եղել են ավելի ընտիր և ճիշտ: Այս տեսակետից երբեմն հենվել ենք նույնիսկ եղակի ընթերցվածների վրա. օրինակ՝ Աբրահամ Անկյուրացու 75-րդ տողում գտնվող զսաճեալուեան միակ ճիշտ ընթերցվածը մենք բնագրի համար վերցրել ենք ՀՍՄՌ Պետական

---

1 Աբրահամ Անկյուրացի, տող 124:
2 Անդ, տող 262:
3 Անդ, տող 263:
4 Անդ, տող 264:
5 Ներսես Բաղիշեցի, տող 11 և 15:
6 Աբրահամ Անկյուրացի, տող 87:
7 Անդ, տող 200:
8 Անդ, տող 59 և 108:
9 Անդ, տող 86:
10 Անդ, տող 95:
11 Անդ, տող 107:
12 Անդ, տող 26:
13 Անդ, տող 76:
14 Անդ, տող 173:
15 Անդ, տող 202:

Մատենադարանի № 5495 ձեռագիր օրինակից՝ ետ մղելով մյուսները։

Մենք պահել ենք նաև բնագրերի ուղղագրական սիստեմը, որն այժմյան արևմտահայ սիստեմն է, ինչպես ցույց է տալիս մի շարք թուրքական բառերի և անունների տառադարձությունը՝ լոտոս (لوطوس), պողազ (بوغاز), տեվլեթ (دولت), Պուրսա (بورسا), և այլն։

ԲՆԱԳՐԵՐ

Ա.

ԱԲՐԱՀԱՄ ԱՆԿԵՈՒՐԱՑԻ

Օգտագործված օրինակներ

Ա=ՀՍՍՌ Պետական Մատենադարանի ձեռ. № 3081՝ «Ոտանաւորս զոր ասացեալ ի յԱբրահամէ ի վերայ Կոստանդինուպաւլսին յորժամ էառ Աւսմանցին», էջ 248բ — 255ա։ Լրիվ բնագիր է։

Ձեռագիրը բովանդակությամբ տաղարան է։ Ընդօրինակվել է Կաֆայում 1617 թ. Զաքարիա Երզնկացու ձեռքով և բաղկացած է 259 թերթերից։

Բ=ՀՍՍՌ Պետական Մատենադարանի ձեռ. № 7029՝ «Տաղ վասն առման Իստամպաւլայ, ասացեալ ողորմ և դեղեցիկ», էջ 132ա—143բ։ Լրիվ բնագիր է։

Ձեռագիրը բովանդակությամբ զանազան նյութերի ժողովածու է։ Ընդօրինակվել է Կ. Պոլսում 1654 թ. Հովհաննես գպրի ձեռքով և բաղկացած է 204 թերթերից։

Գ = ՀՍՍՌ Պետական Մատենադարանի ձեռ. № 702՝ «Տաղ վասն առման Սստամպաւլայ, ասացեալ ողորմ և դեղեցիկ», էջ 138բ—148ա։ Լրիվ բնագիր է։ Բնագրի վերջում գրիչն ավելացրել է հետևյալ տողերը.

«Յակոբ գրծողըս տառապեալ,
Ի սրբբութեանցըն հեռացեալ,
Քիւղանդիոյ եկեալ եկեալ
Եւ այս երկրիս եմ պատահեալ։

Ո՜հ թէ լինէր մեզ երանի,
Ելեալ գնայաք մեք յայն տեղի.
Զեկեղեցիսըն տեննչալի
Տեսանէաք սուրբըն Սոփի։
Անհատատիցըն Մարացոց,
Եւս առաւել Հայաբացոց,
Բանն ասաւծոյ կատարելոյ
Եւ տայ պերկիրս Հռոմայեցոց» (էջ 148ա)։

Ձեռագիրը բովանդակությամբ զանազան նյութերի ժողովածու է։ Ընդօրինակվել է 1660 թ. Հակոբ երեցի ձեռքով, բայց վայրն անհայտ է։ Բաղկացած է 194 թերթերից։

Դ = ՀՍՍՌ Պետական Մատենադարանի ձեռ. № 5495՝ «Պատմութիւն Խոտամպոլ քաղաքին, որ մատնեցաւ ի յայլ ազգաց ձեռն, ո՜հ, ո՜հ, ո՜հ», էջ 19բ—24բ։ Լրիվ բնագիր է. պահպանում է միայն 95-րդ տողը։ 388 և 389 տողերի միջև պոնվում են հետևյալ երկու տները, որոնք մի ավելի հին օրինակից են գալիս.

«Հայաստանեաց հայրապետին,
Որ Յակոբ անբրն յորջորջի,
Ընդդիր եղեալ յայսըմ տառիս,
Նուռբ գրել յիւրում ծառայի։
Թըվին Հազարեակ Հարիւրի
Ութ ու տասըն ամ կատարի,
Որ գրեալ եղև ի Խոտամպոլ
Մայրաքաղաքն ի Կոստանդին» (էջ 24բ)։

Ձեռագիրը բովանդակությամբ զանազան նյութերի ժողովածու է։ Ընդօրինակվել է 1696 թ. ամդեկի Ղազար Շահին վարդապետի ձեռքով։ Սկզբից և վերջից թերի է. այժմ բաղկացած է 118 թերթերից։

Ե = ՀՍՍՌ Պետական Մատենադարանի ձեռ. № 5306՝ «Տաղ վասն առման Ըստ[ամ]պոլայ, ասացեալ ոտրմ և պեպեցիկ», էջ 75բ—94ա։ Լրիվ բնագիր է. պահպանում է միայն 139-րդ տողը։

Ձեռագիրը բովանդակությամբ տաղարան է։ Ընդօրինակման վայրն ու թվականը, ինչպես և գրչի անունը, անհայտ են։ Գրչությունը ժէ դարի է։ Բաղկացած է 138 թերթերից։ Գտնվում է քայքայված դրության մեջ։ Մենք օգտագործել ենք նրա այն ընդօրինակությունը, որը կատարվել է 1941 թ. Աստաուր Շմավոնի Մնացականյանի ձեռքով և որի մեջ պահպանված են նույնությամբ նախագաղափար օրինակի էջակալումը, տողակալումը, և այլն։

Զ = ՀՍՍՌ Պետական Մատենադարանի ձեռ. № 8708՝ «Ողբ ի վերայ Կոստանդինուպօլսի յորժամ առին այլազգիքն», էջ 137ա—148ա։ Լրիվ բնագիր է։

Ձեռագիրը բովանդակությամբ զանազան նյութերի ժողովածու է։ Ընդօրինակման վայրն ու թվականը, ինչպես և գրչի անունը, անհայտ են։ Գրչությունը ժէ դարի է։ Սկզբից և վերջից թերի է. այժմ բաղկացած է 152 թերթերից։

Է = ՀՍՍՌ Պետական Մատենադարանի ձեռ. № 7182՝ «Պատմութիւն անդրադարձման Կոստանդնուպօլսոյ ի յայլազգիս», էջ 95ա—109ա։ Պակասում են 83, 235 և 290—293 տողերը։

Ձեռագիրը բովանդակությամբ զանազան նյութերի ժողովածու է։ Ընդօրինակվել է 1778 թ. Խաչատուր գրչի ձեռքով. ընդօրինակման վայրն անհայտ է։ Բաղկացած է 109 թերթերից։

Ը = ՀՍՍՌ Պետական Մատենադարանի ձեռ. № 1635՝ «Տաղ վասն առաքանն Քրիստոսի, ասացեալ ողորմ և պեղեցիկ», էջ 137ա—147բ։ Լրիվ բնագիր է։

Ձեռագիրը բովանդակությամբ տաղարան է։ Ընդօրինակվել է երկու տարբեր գրիչների ձեռքով և բաղկացած է 201 թերթերից։ Առաջին մասը, որի մեջ գտնվում է մեր բնագիրը, ընդօրինակվել է 1778 թ. տիրացու Նիկողայոսի ձեռքով։ Վայրն անհայտ է։

Թ = ՀՍՍՌ Պետական Մատենադարանի ձեռ. № 8100՝ «Ողբ ի վերայ Կոստանդինուպօլսոյ մեծի մայրաքաղաքին է ասացեալ», էջ 351ա—358ա։ Շատ աղավաղված և թերի օրինակ է. պակասում են 150—151, 193—196, 221—224, 265—272, 289—336, 369—380 և 391—392 տողերը։

Ձեռագիրը բովանդակությամբ պանագան նյութերի ժողովածու է։ Ընդօրինակվել է Կարսում 1784 թ. Մանուել քահանայի ձեռքով։ Վերջից թերի է. այժմ բաղկացած է 371 թերթերից։

ժ = ՀՍՍՌ Պետական Մատենադարանի ձեռ. № 2939՝ «Ոտանաւոր զոր ասացեալ է ի յԱբրահամէ ի վերայ Կոստանդինու Պօլսոյ յորժամ էառ Օսմանցին», էջ 573բ—575բ։ Պահպաստում են 277—392 տողերը։

Ձեռագիրը բովանդակությամբ պանագան նյութերի ժողովածու է։ Ընդօրինակվել է Նոր-Նախիջևանում 1779—1799 թթ. Մարաիրոս Ավետիքով Կաֆայեցու ձեռքով։ Բաղկացած է 597 թերթերից։

ի = ՀՍՍՌ Պետական Մատենադարանի ձեռ. № 1636՝ «Ի Աբրահամէ ի վերայ Ըստամպօլու առմանն», էջ 197բ—206բ։ Լրիվ բնագիր է։

Ձեռագիրը բովանդակությամբ տաղարան է։ Ընդօրինակման վայրն ու թվականը, ինչպես և գրչի անունը, անհայտ են։ Գրված է 1758 թվից առաջ և հավանաբար ժէ դարից է։ Բաղկացած է 225 թերթերից։

լ = ՀՍՍՌ Պետական Մատենադարանի ձեռ. № 6273՝ «Բանք Աբրահամ քահանայի ի յառումն Պօլսոյ», էջ 157բ—158ա։ Պահպաստում են 1—256 և 277—308 տողերը։

Ձեռագիրը բովանդակությամբ հիշատակարանների ժողովածու է, որ կազմել է Գև. Փիրղալեմյանը։ Մեր բնագիրն ընդօրինակվել է Սերաստիայում, բժ. Մեսրոպյանց տանը, 1865 թ.։

խ = «Աբրահամու Անկիւրացւոյ Ղաբլան կոչեցելոյ Ոդր ի վերայ առման Կոստանդնուպոլսոյ ի Տաճկաց», հեռևյալ հրատարակության մեջ. «Ընչխարք մատենագրութեան Հայոց ...ի լոյս էած Ք. Պ.», Պետերբուրգ, 1884, էջ 59—64։ Բովականին աղավաղված օրինակ է, որից և պահպաստում են հեռևյալ տողերը. 49—52, 181—188, 201—204, 213—220, 249—268, 281—284, 297—304, 309—312, 317—320, 341—344 և 385—392։

Այս հրատարակությունը կատարվել է Փարիզի Ազգա-

յին մատենադարանի (Bibliothèque Nationale) այժմյան № 286 հայերեն ձեռագրից (նախկին Suppl. Arm. № 62), էջ 47ա, որտեղ, սակայն, վերնագիրը չունի «Դաբլան կոչեցեալ» հավելումը։ Այդ հավելումը թյուրիմացաբար կատարել է հրատարակիչ Ք. Պատկանյանը, հետևելով բնագրի 381-րդ տողին, որտեղ, որպես հեղինակի անուն, գտնում ենք Դաբլան անունը, փոխանակ Աբրահամի («ես որ Դաբլան մեղաւք լցեալ»), բայց «Դաբլան» անունն ակնհայտ կեղծիք է այդտեղ[1]։

Ծ = «Ողբ ի վերայ մայրաքաղաքին Կոստանդնուպօլսոյ՝ վասն տիրելոյն Տաճկաց, ասացեալ ի յԱբրահամ ակնատես վարդապետէ», Արարատ, 1895, էջ 465—469։ Պակասում են 119—122 տողերը։

Հրատարակել է Խաչիկ Դադյանը, բայց հայտնի չէ՝ ո՛ր ձեռագրից։ Համենայն դեպս՝ այս օրինակը ներկայացնող ոչ մի ձեռագիր չունի, այժմ ՀՍՍՌ Պետական Մատենադարանը։

Կ = «Տաղ վասն առմանն Ստամպօլայ ողորմ և դեղեցիկ», Բանասէր, 1902, էջ 292—303։ Լրիվ բնագիր է։

Հրատարակել է բժ. Վ. Թորգոմյանը (կեղծանուն՝ «Թոտիւն»), իր սեփականությունը եղող մի ձեռագիր ժողովածուից, որը 1782— 1790 թվականների միջև է ընդօրինակվել։ Սույն հրատարակության մեջ նշված են Կ. Պոլսի Հայոց Ազգային Մատենադարանի մի ձեռագիր օրինակի տարբերությունները (տես՝ հաջորդը)։

Հ = Կ. Պոլսի Ազգային Մատենադարանի այն ձեռագիր օրինակը, որի տարբերությունները նշված են նախորդ՝ բժ. Վ. Թորգոմյանի հրատարակության մեջ։ Ձեռագրի մասին չունենք ոչ մի տեղեկություն։ Այս օրինակի սկզբից պակաս է 38 տող, իսկ վերջից՝ 36 տող։ Այս օրինակից մեր բերած տարբերությունները Վ. Թորգոմյանի հրատարակության մեջ նշվածներն են, նշանակում է՝ նրա մնացած մասերը համընկնում են հիշյալ հրատարակության հետ։

